

եւ ի դարձին՝ կաթողիկոսն երկուքը մէկտեղ
Եպիսկոպոս ձեռնադրեց: Քանի մը տարի ետքը
միասին Երուսաղէմ ուխտի գացին, ուր Գրիգոր
Շղթայակիր Պատրիարք (ընտր. 1716—1749
Փետր. 12 †) մեծ պատիւ եւ ընդունելութիւն
ըրաւ իրենց, եւ զիրենք իր Եպիսկոպոսաց դա-
սուն մէջ առաւ: Քիչ ետքը Պատրիարքը զի-
րենք Ս. Յակոբայ նուիրակ կարգեց ուստական
երկիրներու, մանաւանդ Աժտարխանու:

Գրիգոր Պատրիարքի մահունէն ետեւ՝
այս երկուքն, հայր եւ որդի, Յակոբ Նալեան
Պատրիարքի օրով (15 Փետր. 1741—1749,
Մարտ 26 †) Կ. Պոլիս գացին, Պատրիարքէն մեծ
պատուով ընդունուեցան եւ քիչ մ'ատեն հոն
մնացին: Այնտեղ արքունի պալատան «ըլ-ճէ» կա-
րապետ իր քոյրը Յակոբ Եպ.ին եղբօրը տուաւ,
եւ անոր ազդեցութեամբ՝ Յակոբ Եպ. Առաջնորդ
անուանուեցաւ Տիգրանակերտի, իբրեւ յաջորդ
Առաջնորդ Պետրոս Եպ.ի: Իբր հինգ տարի
ետքը ծերունի Յակոբ Եպ.՝ ժողովրդեան հաւա-
նութեամբ ամօռն իր որդւոյն՝ Աբրահամ Եպ.ին
յանձնեց, եւ Արղնի Բարձրահայեաց Ս. Աս-
տուածածնի վանքն առանձնացաւ, ուր քիչ
ետքն առ Աստուած փոխուեցաւ:

Աբրահամ Եպ. գնաց Կ. Պոլիս եւ Տի-
գրանակերտի առաջնորդութեան հրովարտակն
առաւ: Նոյն միջոցին (1754) Կ. Պոլսեցի Աղեք-
սանդը նորընտիր կաթողիկոսն Ղարաղաշեան
Կ. Պոլսէն Էջմիածին կը մեկնէր. հետն առաւ
Աբրահամ Եպ.ն իրրեւ բարեկամ եւ ուղեկից.